օժտուած 3 հոգինոց յատուկ մարմին՝ վարելու համար պատերազմի գործը։ Մարմնի անդամներ ընտրուեցին վարչապետ ու զինուորական նախարար Ե. Գեզեչկորին, ելեւմտական նախարար՝ Խ. Կարճիկեանը և ներքին գործոց նախարար՝ Ն. Ռամիշվիլին։ Ի վերջոյ, Սէյմը, վաւերացրեց նաև — միշտ միաձայնութեամբ — Ժորդանիայի ներկայացրած նախագիծ-կոչը անդրկովկասեան ժողովուրդներին։ Առաջ ենք բերում այդ մարդկային վաւերագիրը ամբողջութեամբ, իբրև արտայայտութիւն այն ժամանակւայ տրամադրութիւնների։

Անդրկովկասեան Սէյմից՝ Անդրկովկասի բոլոր ժողովուրդներին։

Անդրկովկասի՛ քաղաքացիներ։

Հնչել է ժամը, երբ վճռւում է բախտը մեր ընդհանուր հայրենիքի։

Դուք գիտէք, թէ ինչ պահանջներ է ներկայացրել մեզ Թիւրք կառավարութիւնը։

Մեզանից պահանջում էին ընդունել Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը, որ կնքւել է առանց Անդրկովկասի ժողովուրդների գիտութեան, մի դաշնագիր, որը այժմ Ռուսաստանում չի ճանաչում ոչ մի մարդ, որին թանդ է հայրենի երկրի ազատութիւնն ու պատիւը։

Մեզանից պահանջում էին մեր լաւագոյն բերդը՝ Կարսը և մեր ամենալաւ նաւահանգիստը՝ Բաթումը։

Մեզանից պահանջում էին պարպումը մեր երեք շրջանների՝ Կարսի, Արդահանի և Բաթումի։

Մենք արինք ամէն ինչ, որ խաղաղ ճանապարհով, բանակցութիւնների միջոցով ստիպենք Թիւրք կառավարութեան՝ հրաժարւել այդ յաւակնութիւններից։ Զգտելով խաղաղութեան պահպանման՝ մենք յանձն առինք մեծ զոհեր ու զիջումներ։ Մենք յայտնեցինք Թիւրքիային, որ պատրաստ ենք զիջել համարեա բոլոր բաներում։ Բայց մենք չէինք կարող հրաժարւել Բաթումից, մեր միակ ծովային ելքից, միակ ճանապարհից։ Եւ մեր բոլոր ճիդերը՝ վէճը լուծելու խաղաղութեամբ՝ խորտակւեցին Թիւրքիոյ յամառութեան առջև։

Թիւրքիան պնդում է իր սկզբնական պահանջների վրա։ Նրա նպատակն է՝ կտրել Անդրկովկասը արտաքին աշխարհից, խեղդել ու ստրկացնել նրան։ Ցանուն այդ նպատակի են առաջ շարժւում Թիւրք զօրքերը։ Կանգնեցնել նրանց կարող ենք միայն զէնքի ուժով։

Մեր առջև հարց է դրուած շարունակե՞լ բանակցութիւնները Թիւրքիայի հետ ա՛յն միջոցին, երբ նրա զօրքերը մտնում են մեր երկրի խորքերը, թէ՞ ընդհատել և զէնքին յանձնել Անդրկովկասի ազատութեան պաշտպանութիւնը։

Թիւրքիայի հետ վարած մեր բանակցութիւնների սկզբին մենք ասում էինք. Անդրկովկասի ժողովուրդները ծարաւի են հաշտութեան, բայց չեն համաձայնւի դնել հաշտութիւնը ստրկութեան ու խայտառակութեան գնով։